# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

18.08.2021թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Հասմիկ Ալեքսանյանս, ուսումնասիրելով թիվ 07003596 կատարողական վարույթի նյութերը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.01.2021թ. տրված թիվ ԿԴ/1741/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Աննա Արարատի Նալբանդյանից հօգուտ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 636.535 ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող տոկոսագումարներ:

Բռնագանձումը տարածել գրավի պայմանագրով գրավադրված ոսկյա իրերի վրա:

Պահանջատերը գրությամբ հայտնել է, որ պարտապանի պարտավորությունը 16.08.2021թ կազմում է 907.950 ՀՀ դրամ:

«ՌԱՖՕԼ» ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացության համաձայն գրավի առարկա հանդիսացող 2 կտոր ոսկյա իրերը գնահատվել են 572.640 ՀՀ դրամ:

**Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3 և 35.4 հոդվածներով**

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Աննա Արարատի Նալբանդյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա իրերը

| հ/հ | Լոտի անվանումը | Քանակը | Հարգ | Գրամ | Գնահատման գին ՀՀ դրամով | Մեկնարկային գինը (75%)ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ջարդոն | 1 | 580 | 4.0 | 67.200 | 50.400 |
| 2 | Շղթա | 1 | 500 | 35.1 | 505.440 | 379.080 |

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **http//harkadir.ajurd.am** միջոցով:

**Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 06.10.2021թ թվականին:**

Որոշումը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

‹‹Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Digitally signed by ALEKSANYAN HASMIK 6508860747
Date: 2021.09.07 10:53:58 AMT

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ ՀԱՍՄԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն* *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*

*Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնիինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնիինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:*

*Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:*